ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի հուլիսի 11-15-ը Հայաստանի Հանրապետության պատվիրակություն Նիդերլանդների Թագավորություն գործուղման վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

   Դավիթ Լոքյան (պատվիրակության ղեկավար)

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Նիդերլանդների Թագավորություն, 2017թ. հուլիսի 11-15-ը

4. **Հրավիրող կողմը**

   «Աջակցություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը տարածաշրջանային զարգացման գործողությունների պատրաստման համար» ԵՄ ծրագիր

5. **Գործուղման նպատակը**

   Մասնակցել «Աջակցություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը տարածաշրջանային զարգացման գործողությունների պատրաստման համար» ԵՄ ծրագրի շրջանակներում Նիդերլանդների Թագավորությունում կայանալիք ճանաչողական այցին:

6. **Քննարկված թեմաները**

   Այցի ընթացքում պատվիրակության կողմից ուսումնասիրվել է Նիդերլանդների Թագավորության տարածքային զարգացման քաղաքականությունը՝ հիմնված եվրոպական լավագույն փորձի վրա և իրականացվել է փորձի փոխանակում

գյուղատնտեսության, ջրային քաղաքականության, ՓՄՁ և զբոսաշրջության ոլորտներում:

Այցի հիմնական թեման է եղել տարածաշրջանային զարգացումը՝ շեշտը դրվել է գյուղատնտեսության, ՓՄՁ զարգացման և զբոսաշրջության վրա: Քննարկվող թեմաների շարքում ընդգրկված են եղել նաև տարածքային զարգացման քաղաքականության պլանավորմանն և հանրային ծառայությունների մակարդակում նորարարությանը վերաբերող հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ճանաչողական այցի շրջանակներում հանդիպումներ են կայացել Նիդերլանդների ազգային, մարզային և տեղական ինքանակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ, քննարկումներ տարածքային զարգացման քաղաքականության խնդիրների և պլանավորված բարեփոխումների վերաբերյալ, ինչպես նաև հանդիպումներ Նիդերլանդների Թագավորության տարածքային զարգացման դերակատարների հետ, ովքեր ներգրավված են տարածաշրջանային պլանավորման և ծրագրերի իրականացման գործում:

Հուլիսի 12-ին հանդիպումներ են տեղի ունեցել Ռոտտերդամ քաղաքում, որից հետո այցելել ենք Զուիդ նահանգ: Հուլիսի 13-ին հանդիպումներ են կայացել Նիդերլանդների Թագավորության տնտեսական հարցերի և գյուղատնտեսության նախարարությունում, ինչպես նաև Տարածքային զարգացման ընկերությունում: Հուլիսի 14-ին այցելել ենք Ուտրեխտում գտնվող Գյուղական համայնքների զարգացման բյուրո, Վագենինգենի հետազոտական ինստիտուտ, որտեղ հանդիպել ենք Վագենինգենի քաղաքապետին և քննարկել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

8. Գործուղվողը

Դավիթ Լոքյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը

18.07.2017թ.